ԿԱՊԱՆԻ Բժշկական Կենտրոն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

РА СЮНИКИ МАРЗ ЗАО «КАПАНИ БЖШКАКАН КЕНТРОН»

RA MARZ OF SYUNIK «KAPANI BGSHKAKAN KENTRON» CJSC

ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փող. 13
РА Сюникский марз, г. Капан, ул. М. Степаняна 13
13 Melik Stepanyan str., Kapan, Syunik Marz, Republic of Armenia

հեռ. / tel.: +374 285 52992
էլ. փոստ / e-mail: ***kapanmedical@bk.ru***

N 05/ 248
30 մայիս 2024թ.

## ՈՐՈՇՈՒՄ
## «ԱԳԱՍՏ»ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն 2024թ-ի մայիսի 22-ին միակողմանի մասնակի լուծել է «Ագաստ»ՍՊԸ-ի հետ 2024թ. հունվարի 10-ին կնքված № ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02.12 պայմանագիրը՝ № 1, 49, 84 և 95 չափաբաժինների՝ չմատակարարված ապրանքների մասով
ԵՎ
Ղեկավարվելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով , ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. «Ագաստ»ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «Ագաստ»ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Ստորև ներկայացվում է «Ագաստ»ՍՊԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ.անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | Գործունեության հասցեն | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Ագաստ»ՍՊԸ | 00435781 | ք.Երևան,Տ.Պետրոսյան 31/1 | | V | | 30.05.2024թ ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02 |

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ Ա.ԲԱԲԱՅԱՆ